Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5)

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

Սույն փաստաթուղթը պատրաստված է Եվրամիության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն պրոֆեսիոնալ և որակյալ լրագրությանը՝ Ինքնակարգավորման մարմինների տարածաշրջանային ցանցի միջոցով» ծրագրի ֆինանսական օժանդակությամբ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն կարող ընկալվել որպես Եվրամիության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական կարծիքի արտացոլում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5)

Հայաստանի համազգային հեռուստաալիքներով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեին նախորդող քարոզարշավի լուսաբանման մոնիտորինգն իրականացվում է Երևանի մամուլի ակումբի կողմից, 2015թ. հոկտեմբերի 26-ից դեկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում՝ Եվրամիության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն պրոֆեսիոնալ և որակյալ լրագրությանը՝ Ինքնակարգավորման մարմինների տարածաշրջանային ցանցի միջոցով» ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունն ընդգրկում է Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքի, ինչպես նաև հինգ մասնավոր՝ «Արմենիա», «Երկիր Մեդիա», Հայկական Երկրորդ հեռուստաալիք, «Կենտրոն», «Շանթ» հեռուստաալիքների լրատվական և բանավիճային հիմնական հաղորդումները:

Մոնիտորինգի նպատակն է՝ վերը թվարկված հեռարձակողների հեռուստաեթերի բովանդակության վերլուծության և ստացված քանակական տվյալների միջոցով բացահայտել.

- որքանով են հետազոտվող հաղորդումներում, ինչպես նաև հանրաքվեի վճարովի և անվճար քարոզչության բլոկներում պահպանվում ՀՀ օրենսդրության համապատասխան պահանջները,

- ինչ աստիճանի են հետազոտվող հաղորդումներն արտացոլում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների շուրջ կարծիքների բազմազանությունը,

- որքանով է հայաստանյան հեռուստալսարանն՝ ընդհանրապես և հետազոտվող ալիքներից յուրաքանչյուրինը՝ մասնավորապես, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի նկատմամբ տարբեր դիրքորոշումների ծանոթանալու հնարավորություն ստացել:

Մոնիտորինգի առաջին 11 օրերը թույլ չեն տալիս հետազոտվող հեռուստաալիքների կողմից քարոզարշավի լուսաբանման մասին հեռուն գնացող եզրակացություններ անել: Մանավանդ որ, չնայած հոկտեմբերի 10-ին նախանշված քարոզչության պաշտոնական մեկնարկին, որոշ հեռարձակողներ և քաղաքական ուժեր կարող էին հետաձգել բանավեճի մեջ ակտիվ ներքաշվելը մինչև նոյեմբերի 6-ը, երբ նախատեսված է հանրաքվեի քարոզչության համար վճարովի և անվճար եթեր տրամադրել խորհրդարանական խմբակցություններին: Բոլոր հետազոտված նյութերի 6%-ից մի փոքր ավելին է միայն նվիրված եղել մոնիտորինգի թեմային:

Միևնույն ժամանակ կարելի է առանձնացնել լուսաբանման որոշակի միտումներ: Հիմնական օրենքի փոփոխությունների շուրջ բանավեճը գլխավորապես կենտրոնացած էր

կառավարման նախագահական (կամ կիսանախագահական) ձևից խորհրդարանական հանրապետության անցման նախաձեռնության վրա: Եվ այն փաստը, որ Հայաստանի քաղաքացիներին առաջարկվել է քվեարկել ամբողջական տեքստի համար՝ առանց նախագծի տարբեր դրույթներին առանձնակի վերաբերմունք ցուցաբերելու հնարավորության, չէր կարող չնվազեցնել հետաքրքրությունն այն թեմաների նկատմամբ, որոնք պետական իշխանության համակարգի փոփոխության հետ անմիջական կապ չունեն:

Հետազոտվող ժամանակահատվածը նաև համընկել է դեկտեմբերի 6-ի հանրաքվեի ժամանակ քվեարկության ընթացակարգի կապակցությամբ բանավեճի ակտիվացմանը՝ մասնավորապես նույնականացման քարտերով քվեարկության թույլատրելու շուրջ: Եվ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեի հիշատակումների զգալի մասը հենց այս թեմայով էր: Այլ կերպ ասած, քարոզարշավի սկզբնական փուլը ավելի շուտ ընդհանուր քաղաքական կողմնորոշումներ էր արտացոլում, քան՝ վերաբերմունք Հիմնական օրենքի փոփոխությունների բովանդակության նկատմամբ:

Հետազոտվող ԶԼՄ-ներից թեմայի նկատմամբ ամենամեծ հետաքրքրությունը հանդես է բերել «Երկիր Մեդիան»: Ինչպես երևում է կից աղյուսակներից, այս հեռարձակողին է բաժին ընկել ՀՀ Ազգային Ժողովում ներկայացված խորհրդարանական խմբակցություններին/կուսակցություններին (այսուհետև՝ պայմանականորեն «առաջին կատեգորիա») բոլոր վեց հեռուստաալիքների կողմից հատկացված ամբողջ եթերաժամանակի մոտավորապես կեսը և այլ քաղաքական ուժերի, քաղաքացիական հասարակությանը, փորձագիտական շրջանակներին, քաղաքացիական նախաձեռնություններին և առանձին քաղաքացիների (այսուհետև՝ պայմանականորեն «երկրորդ կատեգորիա») հատկացված եթերաժամանակի կեսից ավելին:

Այս ցուցանիշով երկրորդը (երկու կատեգորիաները՝ հանրագումարով) «Կենտրոն» հեռուստաալիքն էր, երրորդը՝ «Արմենիան», չորրորդը՝ Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքը (Հ1): Հայկական Երկրորդ հեռուստաալիքը (Հ2) և «Շանթը» ուսումնասիրվող թեման ծայրահեղ սահմանափակ ուշադրության են արժանացրել. երկուսին միասին բաժին է ընկել վեց հեռարձակողների՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի մասին հետազոտության ենթարկված հաղորդումների եթերաժամանակի հանրագումարի 5%-ից քիչ ավելին: Ընդ որում, հանրաքվեի թեմայով նյութերի ի հայտ գալու հաճախականությամբ այս երկու հեռուստաալիքները «հետ չեն մնում» մյուսներից, ինչը կարող է վկայել քարոզարշավի սկզբնական փուլում էական, խորքային բանավեճի մեջ նրանց սահմանափակ ներգրավվածության մասին:

Խորհրդարանական այն վեց խմբակցություններից, որոնք «Հանրաքվեի մասին» ՀՀ նորացված օրենքով առաձնացվել են որպես ԶԼՄ-ներում քարոզարշավի հիմնական սուբյեկտներ, հետազոտված հաղորդումները առավել հաճախ անդրադարձել են Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) ներկայացուցիչներին, նրանցից հետո գալիս են «Հայ ազգային կոնգրեսի» (ՀԱԿ), «Հայ Յեղափոխական Դաշնակցության» (ՀՅԴ), «Օրինաց երկրի» (ՕԵԿ), «Բարգավաճ Հայաստանի» (ԲՀԿ) և «Ժառանգության» ներկայացուցիչները: Սահմանադրության փոփոխությունների հարցով վերջինի շարքերում պառակտումը, որի հետևանքը դարձան կուսակցության և նրա խորհրդարանական խմբակցության մեծամասնության դիրքորոշումների հակասությունները, ամենայն հավանականությամբ, անդրադարձան նաև եթերում այս քաղաքական ուժի ներկայացվածությանը: Մասնավորապես, հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում

մոնիտորինգի թեմային նվիրված, հետազոտության ենթարկված հաղորդումներում խմբագրական եթերաժամանակը նրան բաժին չի հասել Հ1 և «Արմենիա» ալիքներում: Այդպես նաև ԲՀԿ-ն խմբագրական եթերաժամանակ չի ստացել երկու հեռուստաալիքներում («Արմենիա» և «Երկիր Մեդիա»), սակայն տվյալ պարագայում, հնարավոր է, հիմնական պատճառը թեմայի շուրջ բանավեճերին նրա ներկայացուցիչների սահմանափակ ակտիվությունն է եղել: Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ՕԵԿ-ի դիրքորոշումը չի լուսաբանվել «Կենտրոն» հեռուստաալիքով:

Ի դեպ, ի տարբերություն անդրադարձների հաճախականության, հատկացված խմբագրական եթերաժամանակի հանրագումարային ծավալով առաջատարը ՀՅԴ-ն էր: Այդ ցուցանիշով, ինչպես երևում է կից աղյուսակներից, տարբեր հեռուստաալիքներում առաջատարները տարբեր խորհրդարանական խմբակցություններ/կուսակցություններ են եղել: Մասնավորապես, ՀՀԿ-ն առաջինն է եղել «Երկիր Մեդիայի» և «Շանթի», ՀԱԿ-ը՝ «Արմենիայի» և Հ2-ի, ՕԵԿ-ը՝ Հ1-ի և ՀՅԴ-ն՝ «Կենտրոնի» եթերում: Սակայն, սա եզրակացությունների տեղիք չի տալիս, քանի որ բանավիճային հաղորդման մեջ որևէ կուսակցության ներկայացուցչի նույնիսկ մեկ անգամ հայտնվելը կարող է ազդել մոնիտորինգի 11 օրերի ընդհանուր պատկերի վրա:

«Երկրորդ կատեգորիայում» առավել ակտիվ են եղել, պայմանականորեն ասած, «ոչ քաղաքական սեգմենտի» ներկայացուցիչները (հասարակական կազմակերպություններ, փորձագետներ, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ): Միևնույն ժամանակ որոշ հեռարձակողներ («Արմենիա», Հ2) հետազոտվող հաղորդումներում այս խմբին ընդհանրապես եթերաժամանակ չեն հատկացրել, իսկ Հ1-ը հետաքրքրություն չի ցուցաբերել այն երկու քաղաքացիական նախաձեռնությունների նկատմամբ, որոնք ի հայտ են եկել հենց Սահմանադրության փոփոխությունների համատեքստում («Չե՛ք անցկացնի» և «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ): «Երկիր Մեդիան» և «Շանթը» մեկ ուրիշ խումբ են անտեսել ՝ անկախ պատգամավորներին և արտախորհրդարանական կուսակցություններին:

Մոնիտորինգի թեմային բոլոր 333 անդրադարձներից 68-ը պարունակում էին Սահմանադրության փոփոխությունների նախագծի նկատմամբ դրական վերաբերմունք (ինչպես նաև՝ դրա հնարավոր ընդունման նկատմամբ), 84-ը՝ բացասական վերաբերմունք, 181-ը չեզոք էին: (Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ որպես անդրադարձների նշանային բնութագրիչներ չեն արձանագրվել հանրաքվեի ընթացակարգի, այդ թվում՝ նույնականացման քարտերով քվեարկության ինտենսիվ քննարկումների գնահատականները: Այս հարցին անդրադարձները, թեև դրանցում գերակշռում էր սուր քննադատությունը , գնահատվել են որպես չեզոք, քանի որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի նկատմամբ անմիջական վերաբերմունք չէին պարունակում):

«Առաջին կատեգորիայում» գերակշռություն ստացան երկրի Հիմնական օրենքի փոփոխությունների նկատմամբ դրական անդրադարձները, ընդ որում՝ սուբյեկտները հավասար են բաժանվել՝ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի և ՀՅԴ-ի ներկայացուցիչներն արտահայտվում էին նախագծի և դրա ընդունման օգտին, իսկ ՀԱԿ-ը, ՕԵԿ-ը և «Ժառանգությունը» (բացառությամբ մեկ դեպքի)՝ դեմ: «Երկրորդ կատեգորիայում» էական առավելություն են ստացել բացասական անդրադարձները: Ընդ որում հավասարակշռությունը ՀԿ-ներ/փորձագետներ/ոչ ֆորմալ ակտիվիստներ խմբի, ինչպես նաև՝ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձևավորված քաղաքացիական նախաձեռնությունների դեպքում խիստ

բացասական է (ընդդեմ նախագծի և դրա ընդունման): Անկախ պատգամավորներ և արտախորհրդարանական կուսակցություններ խմբում արձանագրվել է դրական անդրադարձների նվազագույն առավելություն, իսկ անհատ քաղաքացիների (vox populi) նշանային բնութագրիչներով անդրադարձները արձանագրվել են բնակչության սոցհարցման արդյունքների ներկայացման հաշվին:

Պայմանական «երրորդ կատեգորիայում» (ԶԼՄ-ներ/լրագրողներ և միջպետական միջազգային կազմակերպություններ/արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ) ոչ մի բացասականի դիմաց արձանագրվել է 3 դրական անդրադարձ՝ բոլորը միջազգային հանրության կողմից: Խոսելով այս կատեգորիայի մասին, անհրաժեշտ է ընդգծել ԶԼՄ-ների ներկայացուցիչների կողմից այս թեմային ծայրահեղ հազվադեպ և եթերաժամանակի տեսանկյունից սահմանափակ անդրադարձները և դրանցում արտահայտությունների նշանային բնութագրիչների բացակայությունը:

Երկու հեռուստաալիքների հետազոտված հաղորդումներում (Հ1 և «Կենտրոն») առավելություն ստացել են Սահմանադրության փոփոխությունների և դրա ընդունման օգտին անդրադարձները, «Արմենիայում» արձանագրվել է հավասարություն, մնացած երեք ալիքներում գերակշռում են դեմ արտահայտությունները:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ 2015թ. հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մոնիտորինգի արդյունքները թույլ են տալիս նախնական եզրակացություն կատարել այն մասին, որ հանրաքվեի քարոզարշավի օրենսդրական-նորմատիվային կարգավորումը որոշակիորեն կատարելագործման կարիք ունի: Մոնիտորինգի խումբը հետագա հաշվետվություններում կանդրադառնա այս հիմնախնդրին:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5
Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Կենտրոն», «Շանթ»

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			**1483**				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			**94**				
Խմբերը			**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**	**Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)**		
					+	**–**	**0**
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	3734.1	87	30	0	57
		«Բարգավաճ Հայաստան»	219.6	20	8	0	12
		«Հայ ազգային կոնգրես»	3271.1	56	0	20	36
		«Օրինաց երկիր»	3203.6	27	0	8	19
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	4084.1	37	13	0	24
		«Ժառանգություն»	1926.5	19	1	10	8
		Ընդամենը (առաջին խմբի համար)	**16439**	**246**	**52**	**38**	**156**
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		721	19	7	6	6
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		4298	30	3	16	11
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	1287	7	0	7	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	159	14	0	14	0
5.	Vox Populi		1085	6	3	3	0
		Ընդամենը (2-5 խմբերի համար)	**7550**	**76**	**13**	**46**	**17**
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)**		
					+	**–**	**0**
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		8	3	0	0	3
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		246	8	3	0	5
		Ընդամենը (6-7 խմբերի համար)	**254**	**11**	**3**	**0**	**8**

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5
Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Հ1)

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			**332**				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			**14**				
Խմբերը			**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**	**Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)**		
					+	**–**	**0**
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	364.6	6	5	0	1
		«Բարգավաճ Հայաստան»	140.6	3	3	0	0
		«Հայ ազգային կոնգրես»	126.1	3	0	2	1
		«Օրինաց երկիր»	1299.6	2	0	2	0
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	47.6	1	1	0	0
		«Ժառանգություն»	0	1	0	0	1
Ընդամենը (առաջին խմբի համար)			**1978.5**	**16**	**9**	**4**	**3**
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		204	2	1	1	0
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		210.5	6	1	1	4
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	0	0	0	0	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	0	0	0	0	0
5.	Vox Populi		89	2	1	1	0
Ընդամենը (2-5 խմբերի համար)			**503.5**	**10**	**3**	**3**	**4**
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)**		
					+	**–**	**0**
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		8	1	0	0	1
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		40	2	0	0	2
Ընդամենը (6-7 խմբերի համար)			**48**	**3**	**0**	**0**	**3**

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5
Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

«Արմենիա»

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			**234**				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			**17**				
Խմբերը			**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**	**Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)**		
					+	**–**	**0**
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	118	17	3	0	14
		«Բարգավաճ Հայաստան»	0	2	0	0	2
		«Հայ ազգային կոնգրես»	2597	10	0	3	7
		«Օրինաց երկիր»	12	6	0	1	5
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	61	4	0	0	4
		«Ժառանգություն»	0	5	0	1	4
		Ընդամենը (առաջին խմբի համար)	**2788**	**44**	**3**	**5**	**36**
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		252	7	3	1	3
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		0	1	0	0	1
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	0	1	0	1	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	0	2	0	2	0
5.	Vox Populi		151ա	2	1	1	0
		Ընդամենը (2-5 խմբերի համար)	**403**	**13**	**4**	**5**	**4**
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)**		
					+	**–**	**0**
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		0	1	0	0	1
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		168	4	3	0	1
		Ընդամենը (6-7 խմբերի համար)	**168**	**5**	**3**	**0**	**2**

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5
Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

«Երկիր Մեդիա»

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			**252**				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			**18**				
Խմբերը			**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**	**Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)**		
					+	**–**	**0**
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	2488.5	25	8	0	17
		«Բարգավաճ Հայաստան»	0	2	0	0	2
		«Հայ ազգային կոնգրես»	109	12	0	5	7
		«Օրինաց երկիր»	1774	3	0	1	2
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	1945.5	12	4	0	8
		«Ժառանգություն»	1812.5	3	1	2	0
Ընդամենը (առաջին խմբի համար)			**8129.5**	**57**	**13**	**8**	**36**
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		0	0	0	0	0
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		3623.5	9	0	8	1
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	1235	2	0	2	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	0	3	0	3	0
5.	Vox Populi		0	0	0	0	0
Ընդամենը (2-5 խմբերի համար)			**4858.5**	**14**	**0**	**13**	**1**
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)**		
					+	**–**	**0**
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		0	0	0	0	0
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		38	1	0	0	1
Ընդամենը (6-7 խմբերի համար)			**38**	**1**	**0**	**0**	**1**

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5
Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2)

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			**253**				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			**12**				
Խմբերը			**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**	**Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)**		
					+	**–**	**0**
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	88	13	2	0	11
		«Բարգավաճ Հայաստան»	8	3	0	0	3
		«Հայ ազգային կոնգրես»	121	11	0	4	7
		«Օրինաց երկիր»	83	5	0	2	3
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	89	6	2	0	4
		«Ժառանգություն»	45	3	0	3	0
Ընդամենը (առաջին խմբի համար)			**434**	**41**	**4**	**9**	**28**
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		82	3	1	1	1
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		0	1	0	1	0
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	0	1	0	1	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	140	4	0	4	0
5.	Vox Populi		0	0	0	0	0
Ընդամենը (2-5 խմբերի համար)			**222**	**9**	**1**	**7**	**1**
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)**		
					+	**–**	**0**
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		0	0	0	0	0
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		0	0	0	0	0
Ընդամենը (6-7 խմբերի համար)			**0**	**0**	**0**	**0**	**0**

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5
Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

«Կենտրոն»

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			**251**				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			**20**				
Խմբերը			**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**	**Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)**		
					+	**–**	**0**
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	525	17	10	0	7
		«Բարգավաճ Հայաստան»	42	6	3	0	3
		«Հայ ազգային կոնգրես»	232	9	0	4	5
		«Օրինաց երկիր»	0	5	0	1	4
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	1876	7	4	0	3
		«Ժառանգություն»	50	3	0	2	1
Ընդամենը (առաջին խմբի համար)			**2725**	**47**	**17**	**7**	**23**
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		183	4	2	2	0
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		261	9	1	4	4
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	52	2	0	2	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	0	2	0	2	0
5.	Vox Populi		845	2	1	1	0
Ընդամենը (2-5 խմբերի համար)			**1341**	**19**	**4**	**11**	**4**
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)**		
					+	**–**	**0**
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		0	1	0	0	1
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		0	1	0	0	1
Ընդամենը (6-7 խմբերի համար)			**0**	**2**	**0**	**0**	**2**

2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5
Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

«Շանթ»

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			**161**				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			**13**				
Խմբերը			**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**	**Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)**		
					+	**–**	**0**
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	150	9	2	0	7
		«Բարգավաճ Հայաստան»	29	4	2	0	2
		«Հայ ազգային կոնգրես»	86	11	0	2	9
		«Օրինաց երկիր»	35	6	0	1	5
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	65	7	2	0	5
		«Ժառանգություն»	19	4	0	2	2
Ընդամենը (առաջին խմբի համար)			**384**	**41**	**6**	**5**	**30**
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		0	3	0	1	2
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		203	4	1	2	1
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	0	1	0	1	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	19	3	0	3	0
5.	Vox Populi		0	0	0	0	0
Ընդամենը (2-5 խմբերի համար)			**222**	**11**	**1**	**7**	**3**
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)**	**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)**		
					+	**–**	**0**
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		0	0	0	0	0
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		0	0	0	0	0
Ընդամենը (6-7 խմբերի համար)			**0**	**0**	**0**	**0**	**0**